

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում պատկերված է.

- 1) բլուր
- 2) լեռնահովիտ
- 3) հարթավայր
- 4) գոգավորություն



2 Ո՞ր ժամային գոտին է արևելյան երկայնության $22^{\circ}30'$ և $37^{\circ}30'$ միջօրեականների միջև.

- 1) առաջին
- 2) երկրորդ
- 3) երրորդ
- 4) զրոյական կամ 24-րդ

3 Հասարակածի վրա տեղակայված երկու քաղաքների հեռավորությունը 11250 կմ է, իսկ քարտեզում՝ 45 սմ: Քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 25 000 000
- 2) 1 : 40 000 000
- 3) 1 : 4 000 000
- 4) 1 : 2 500 000

4 Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) տարվա եղանակների հերթափոխը
- 2) տաք օդի վեր բարձրանալը
- 3) նյութերի համաշխարհային շրջապտույտը քարոլորտում
- 4) ծովային հոսանքների ուղղության շեղումը նախնական ուղղությունից

5 Մթնոլորտային ճնշումը կախված է.

- 1) ամպամածությունից
- 2) վայրի բուսածածկույթից
- 3) տեղումների տեսակից
- 4) վայրի բացարձակ բարձրությունից

6 Որևէ տարածքի տեղումների տարեկան քանակը կախված չէ.

- 1) օվկիանոսների և ծովերի նկատմամբ վայրի ունեցած հեռավորությունից
- 2) օվկիանոսի ջրի աղիությունից
- 3) ծովային հոսանքների տեսակից
- 4) գերիշխող քամիների ուղղությունից

7 Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը ուղեծրի հեռակետում լինում է.


- 1) հունվարի 3-ին
- 2) մարտի 21-ին
- 3) հուլիսի 5-ին
- 4) սեպտեմբերի 23-ին

8 Մեծ Արարատ լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 320 մմ ս. ս. է: Նույն պահին ճնշումը Արարատյան դաշտում (ծովի մակարդակից մոտ 850 մ բարձրության վրա) կլինի.

- 1) 431 մմ
- 2) 751 մմ
- 3) 760 մմ
- 4) 670 մմ


9 Նկարում պատկերված է.

- 1) թվային մասշտաբ
- 2) նավթամուղ
- 3) գծային մասշտաբ
- 4) երկաթուղի



10 Ո՞ր կլիմայական մարզում է Բ բնակավայրը.

- 1) մերձարևադարձային միջերկրածովային
- 2) արևադարձային խոնավ
- 3) արևադարձային չոր
- 4) մերձարևադարձային չոր



11

Ո՞ր ծովածոցերն են արևադարձային գոտում.

- 1) Կարպենտարիա և Մեծ Ավստրալական
- 2) Սիամի և Բենգալական
- 3) Բիսկայան և Բոտնիկական
- 4) Կալիֆոռնիական և Պարսից

12

Բարեխառն ծովային կլիման բնորոշ է.

- 1) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան մասերին
- 2) Ուրալյան լեռներից արևելք ընկած շրջաններին
- 3) Ավստրալիայի ծայր հարավարևմտյան մասին
- 4) Պատագոնիայի արևելյան առափնյա շրջաններին

13

Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այդ բնական զոնայում ձմեռը ցուրտ է, ամառը՝ տաք: Տեղումների տարեկան քանակը 400–500 մմ է: Գերակշռում է խոտային բուսականությունը: Ո՞րն է այդ բնական զոնան.

- 1) տափաստանը
- 2) անապատը
- 3) տունդրան
- 4) սավաննան

14

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրի ձգողության ուժի հետևանքով ծանր նյութերն իջել են ներքև, թեթևները՝ բարձրացել:
- 2) Երկրի ձգողական մեծ ուժի շնորհիվ օդը, մարմինները չեն հեռանում նրանից:
- 3) Երկրի մագնիսական և աշխարհագրական բևեռները, հետևաբար նաև աշխարհագրական և մագնիսական միջօրեականները համընկնում են:
- 4) Գնդաձևության շնորհիվ նույն պահին Երկրի մակերևույթի տարբեր լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:

15

Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ամենաբարձր ջերմաստիճանը (+57°C) գրանցվել է Մահվան հովտում:
- 2) Մայրցամաքի արևելյան հարթավայրային շրջաններում արևելքից արևմուտք տեղումների քանակը նվազում է:
- 3) Մայրցամաքի հարավում՝ արևադարձային ծովամերձ շրջաններում, պասսատների ազդեցությամբ թափվում են մինչև 2500–4000 մմ տեղումներ:
- 4) Մայրցամաքի կենտրոնական մասում ձմռանը ձևավորվում է ցածր ճնշման մարզ:

16

«Գետ – վտակներ» զույգերից ո՞րն է սխալ.

- 1) Կուր – Արաքս, Ախուրյան
- 2) Վոլգա – Օկա, Կամա
- 3) Գանգես – Բրահմապուտրա, Ինդոս
- 4) Շատ-Էլ-Արաբ – Եփրատ, Տիգրիս

17

«Հարթավայր – աշխարհամաս» զույգից ընտրել սխալը.

- 1) Միջագետքի – Ասիա
- 2) Դեկանի – Ասիա
- 3) Հյուսիս-Գերմանական – Եվրոպա
- 4) Լենքորանի – Եվրոպա

18


«Նեղուց – հարակից աշխարհագրական օբյեկտ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Թորենսի – Առնհեմլենդ թերակղզի
- 2) Կուկի – Նոր Գվինեա կղզի
- 3) Բասսի – Թասմանիա կղզի
- 4) Բասսի – Քեյփ Յորք թերակղզի

19

Քարտեզում Գ տառով n° ր օվկիանոսային հոսանքն է նշված.

- 1) Ֆոլկլենդյան
- 2) Գվիանական
- 3) Բրազիլական
- 4) Պերուական



20

Քարտեզում Ը տառով n° ր մայրաքաղաքն է նշված.

- 1) Կարակաս
- 2) Բրազիլիա
- 3) Ասունսիոն
- 4) Լա Պաս

21

Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում է.

- 1) տարվա եղանակների հերթափոխ
- 2) Երկրի առանցքի ուղղության շեղում
- 3) Երկրի մագնիսական բևեռների տեղափոխություն
- 4) շարժվող մարմինների շեղում նախնական ուղղությունից

22

Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հասարակածային կլիմայական գոտում ջերմաստիճանների տատանումների տարեկան լայնույթը ընդամենը 10° – 12° է:
- 2) Ձմռանը մերձարևադարձային գոտիներում տիրապետում են արևադարձային օդային զանգվածները:
- 3) Հասարակածային կլիմայական գոտում տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
- 4) Մայրցամաքի ծայր հյուսիսային և հարավային շրջանները մերձարևադարձային գոտիներում են:

23

Հունիսի 22-ին հարավային կիսագնդի ցանկացած վայրի համար ճառագայթների անկման անկյունը ո՞ր բանաձևով է հաշվարկվում.

- 1) $\alpha = 90^{\circ} - (\varphi - 23,5^{\circ})$
- 2) $\alpha = 90^{\circ} - \varphi$
- 3) $\alpha = 90^{\circ} + \varphi$
- 4) $\alpha = 90^{\circ} - (\varphi + 23,5^{\circ})$

24


Հարավային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 2) Տարածաշրջանի բոլոր երկրները հանրապետություններ են:
- 3) Տարածաշրջանի ամենազարգացած երկրներն են Իտալիան և Իսպանիան:
- 4) Ժողովուրդների մեծամասնության լեզուները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի գերմանական լեզվախմբին:

25

Քարտեզում 3 թվով նշված են այն տարածքները, որտեղ.

- 1) տղամարդկանց թվաքանակը գերազանցում է կանանց թվաքանակին
- 2) կանանց և տղամարդկանց թվաքանակները հավասար են
- 3) անմարդաբնակ են
- 4) կանանց թվաքանակը գերազանցում է տղամարդկանց թվաքանակին



26

Ո՞ր տիպի քաղաքներին են բնորոշ անսովոր խիտ և ցածրահարկ կառուցապատումը և բարեկարգման ցածր մակարդակը.

- 1) ամերիկյան
- 2) ասիական
- 3) եվրոպական
- 4) լատինամերիկյան

27

Քաղաքային ազլումերացիաների ընդարձակման և միաձուլման հետևանքով ձևավորված ավելի հզոր ու ընդարձակ ուրբանիզացված գոտին կոչվում է.

- 1) ուրբանիզացիա
- 2) մեգալոպոլիս
- 3) տրանսպորտային հանգույց
- 4) տեխնոպոլիս

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Տարածքի մեծությամբ աշխարհի 7-րդ պետությունն է: Ըստ պետական կառուցվածքի՝ դաշնային հանրապետություն է: Աշխարհի առավել բազմազգ ու բազմալեզու պետություններից է: Այս պետությունն առաջատարներից է թեյի, մանգոյի և ադամաթզի բերքով: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Կանադան
- 2) Ինդոնեզիան
- 3) Իրանը
- 4) Հնդկաստանը

29

Քաղաքի բնակչության թիվը 128,000 է, բնական աճի գործակիցը՝ 24 %: Մեկ տարվա ընթացքում երկիր է եկել 5485 մարդ, մեկնել՝ 3780 մարդ: Երկրի բնակչության թիվը մեկ տարի հետո կկազմի.

- 1) 1323780 մարդ
- 2) 1325485 մարդ
- 3) 132777 մարդ
- 4) 131072 մարդ

30

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության մահացության ամենաբարձր ցուցանիշները բնորոշ են աֆրիկյան երկրներին:
- 2) Բնակչության վերարտադրության առաջին տիպին են պատկանում Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրները:
- 3) Բնակչության թվի աճի տեմպերը բարձր են վերարտադրության երկրորդ տիպի երկրներում:
- 4) Բնակչության ցածր բնական աճը բնորոշ է զարգացած երկրներին:

31

Միայն մեկ երկրի հետ պետական սահման ունեն.

- 1) Պորտուգալիան և Կանադան
- 2) Չիլին և Մեքսիկան
- 3) Մոնղոլիան և Ալբանիան
- 4) Իսպանիան և Նորվեգիան

32

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
- 2) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:
- 3) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 4) Աէկներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:

33

Թուրքական լեզվախմբի ժողովուրդներ չեն.

- 1) թուրքմենները և թուրքերը
- 2) դրդըզները և ադրբեջանցիները
- 3) դազախները և ուզբեկները
- 4) տաջիկները և պարսիկները

34

Գյուղատնտեսական հողահանդակ չէ.

- 1) արոտավայրը
- 2) խոտհարքը
- 3) անտառը
- 4) վարելահողը

35

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ներկայումս համաշխարհային էներգետիկան իր զարգացման ածխային փուլում է:
- 2) Համաշխարհային էլեկտրաէներգիայի կառուցվածքում առաջատարը ջրաէներգետիկան է:
- 3) Արեգակնային էներգիայի օգտագործումը մեծ է հատկապես բարեխառն գոտու խոնավ շրջաններում:
- 4) Կրթությունը, գիտությունը, մշակույթը ոչ արտադրական ոլորտի ճյուղերից են:

36

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարավկասպիական դաշտավայրը երկրի ամենաչորային շրջանն է:
- 2) Երկրի կենտրոնական շրջաններում գյուղատնտեսության հիմքը ոռոգովի երկրագործությունն է:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 4) Երկիրը հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով:

37

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գյուղատնտեսությունն, ի տարբերություն արդյունաբերության, ունի տարածքային համատարած տեղաբաշխում:
- 2) Գյուղատնտեսության գլխավոր արտադրության միջոցը հողն է:
- 3) Գյուղատնտեսական արտադրության մեջ լավ է արտահայտված սեզոնայնությունը:
- 4) Բնակլիմայական պայմանների ազդեցությունը գյուղատնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման վրա աննշան է:

38

Տրանսպորտային ցանցի զծային կոնֆիգուրացիան բնորոշ է.

- 1) Կանադային և Ռուսաստանին
- 2) Արգենտինային և Բրազիլիային
- 3) ԱՄՆ-ին և Չինաստանին
- 4) Կուբային և Չիլիին

39

Դեպի ծով ելք չունեն.

- 1) Բելգիա և Բուլղարիա
- 2) Ալժիր և Պերու
- 3) Ռումինիա և Ուկրաինա
- 4) Ավստրիա և Չեխիա

40

«Ջրանցք – պետություն» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Պանամայի – Կոլումբիա
- 2) Կորնթոսի – Ֆրանսիա
- 3) Քիլի – Գերմանիա
- 4) Սուեզի – Իսրայել

41

Եվրոպա աշխարհամասի այս տարածաշրջանը հարուստ է անտառային և ջրային ռեսուրսներով: Տարածաշրջանի երկրները բնութագրվում են բնակչության ցածր բնական աճով, իսկ կյանքի միջին տևողությամբ աշխարհի առաջատարներից են: Հավատացյալ բնակչության հիմնական մասը քրիստոնյա բողոքականներ են: Ո՞րն է այդ տարածաշրջանը.

- 1) Արևելյան Եվրոպան
- 2) Հարավային Եվրոպան
- 3) Արևմտյան Եվրոպան
- 4) Հյուսիսային Եվրոպան

42

Գերմանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության բնական աճի ցուցանիշը բարձր է:
- 2) Տնտեսությունը արդյունաբերական (ինդուստրիալ) զարգացման փուլում է:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 4) Բնակչության թվով Եվրոպայում երկրորդն է՝ Ֆրանսիայից հետո:

43

Ո՞ր շարքի միջլեռնային գոգավորություններն են տրված ըստ բարձրությունների աճման.

- 1) Մշո, Բալախովտի, Խարբերդի
- 2) Երզնկայի, Կարնո, Աշկալայի
- 3) Դերջանի, Երզնկայի, Կամախի
- 4) Մշո, Մանազկերտի, Ալաշկերտի

44

«Լճային գոգավորություն – ծագում» զույգերից ընտրել սխալը.

- 1) Վանա – տեկտոնահրաբխային
- 2) Քարի – սառցադաշտային
- 3) Փարվանա – մնացորդային
- 4) Ուրմիա – տեկտոնական

45

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կլիման պայմանավորող գլխավոր գործոնը մթնոլորտի տեղական շրջանառությունն է:
- 2) Օդի առավելագույն ջերմաստիճանը $+46^{\circ}\text{C}$ է:
- 3) Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերին կազմում է $72^{\circ}-77^{\circ}$:
- 4) Ամենատաք ամիսը մայիսն է:

46

Մեծամորի ակեր միջին հաշվով տարեկան արտադրում է ՀՀ-ում արտադրվող 7,5 մլրդ կՎտ•ժ էլեկտրաէներգիայի 29 %-ը: Տարեկան որքա՞ն էլեկտրաէներգիա է արտադրում Մեծամորի ակերը.

- 1) 820 մլն կՎտ•ժ
- 2) 2,87 մլն կՎտ•ժ
- 3) 82 մլն կՎտ•ժ
- 4) 2175 մլն կՎտ•ժ

47

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ-ում ոչխարաբուծությունը մասնագիտանում է մսակաթնաբրդատու ուղղությամբ:
- 2) ՀՀ-ում հացահատիկ մշակում են 500–2200 մ բարձրություններում:
- 3) ՀՀ բուսաբուծության մասնագիտացման կարևոր ուղղություններից է այգեգործությունը:
- 4) Չորացման շնորհիվ ՀՀ լեռնամարգագետնային հողերը դարձել են մշակովի:

48

Տավուշի մարզի հյուսիսի ցածրադիր հովիտներում կլիման.

- 1) բարեխառն լեռնային է
- 2) չափավոր ցամաքային է
- 3) չոր և խիստ ցամաքային է
- 4) չոր մերձարևադարձային է

49


Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.

- 1) անտառային
- 2) ալպյան և մերձալպյան
- 3) լեռնատափաստանային
- 4) կիսաանապատային

50

Արարատի մարզում բնապահպանական հիմնախնդիր չէ.

- 1) բացարձակ ոռոգման գոտի լինելու հանգամանքը
- 2) ցեմենտի արտադրման ժամանակ փոշու և այլ թափոնների առկայությունը
- 3) հողերի աղակալումը
- 4) արտեզյան ավազանների աղտոտումը



51

Քարտեզում Դ տառով ո՞ր թերակղզին է նշված.

- 1) Պիրենեյան
- 2) Ապենինյան
- 3) Բալկանյան
- 4) Փոքր Ասիա

52

Քարտեզում Ե տառով ո՞ր պետությունն է նշված.

- 1) Բելգիա
- 2) Շվեյցարիա
- 3) Ավստրիա
- 4) Նիդերլանդներ

53 **Քաղցրահամ ջրի պաշարներով սակավ ապահովված երկրներ են.**

- 1) Ռուսաստանը և Չինաստանը
- 2) Կանադան և ԱՄՆ-ը
- 3) Իրանը և Ավստրալիան
- 4) Բրազիլիան և Ինդոնեզիան

54 **«Ջերմոցային էֆեկտը» պայմանավորված է.**

- 1) սառցադաշտերի հալմամբ
- 2) մթնոլորտի շրջանառությամբ
- 3) մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ
- 4) Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվությամբ

55 **Ո՞ր բույսերն են որպես հումք օգտագործվում արդյունաբերության տարբեր ճյուղերում.**

- 1) դեկորատիվ
- 2) դեղաբույսերը
- 3) տեխնիկական
- 4) կերային

56 **Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.**

- | | |
|--------------------|-----------|
| 1. կրաքար | 5. կվարց |
| 2. տուֆ | 6. բազալտ |
| 3. մարմար | 7. խարամ |
| 4. այրվող թերթաքար | 8. գնեյս |

57 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Խաղաղ օվկիանոս.**

- | | |
|-----------|---------------|
| 1. Յուկոն | 5. Ռիո Գրանդե |
| 2. Գանգես | 6. Կոլումբիա |
| 3. Մուրեյ | 7. Միսիսիպի |
| 4. Ամուր | 8. Մեկոնգ |

58

Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».

- | | |
|-------------|-----------|
| 1. Կանադա | 5. Լատվիա |
| 2. Թուրքիա | 6. Եմեն |
| 3. Ուկրաինա | 7. Իրան |
| 4. ԱՄՆ | 8. Սիրիա |

59

Գրել Ախուրյանից սկիզբ առնող ջրանցքների համարները.

- | | |
|-------------------|--------------------|
| 1. Արգնի-Շամիրամի | 5. Շիրակի |
| 2. Արմավիրի | 6. Արաքսի |
| 3. Կոտայքի | 7. Ստորին Հրազդանի |
| 4. Թալինի | 8. Արտաշատի |

60

Գրել այն հրաբուխների համարները, որոնք Աֆրիկայում են.

- | | |
|---------------|----------------|
| 1. Կրակաստաու | 5. Կիլիմանջարո |
| 2. Կամերուն | 6. Օրիսաբա |
| 3. Հեկլա | 7. Էրեբուս |
| 4. Ռուիս | 8. Դեմավենդ |

61

Գրել Մեծ Անտիլյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները.

- | | |
|----------------|-----------------|
| 1. Կուրբա | 5. Վիկտորիա |
| 2. Հրո երկիր | 6. Պուերտո-Ռիկո |
| 3. Ֆոլկլենդյան | 7. Վանկուվեր |
| 4. Հաիթի | 8. Ճամայկա |

62

Տրված պետությունները դասավորել խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի նվազման կարգով.

1. Հնդկաստան
2. Բրազիլիա
3. Արգենտինա
4. Չինաստան

63

Հայկական լեռնաշխարհի տրված լճերի համարները դասավորել ըստ այն լեռների, որոնց վրա տեղակայված են այդ լճերը. Հայկական պար, Արագած, Գեղամա.

1. Քարի
2. Գայլատու
3. Ակնա

(64-65) Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 400 մմ է, օդի ջերմաստիճանը՝ -4° , ստորոտին՝ $+10^{\circ}$ (հաշվարկը կատարել 5° -ով).

64 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

65 Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտին:

(66-67) Երկրի բնակչության թիվը 20 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 16 մլն, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 300 000.

66 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

67 Որոշել ծնելիության գործակիցը (%):

68 Որոշել ավտոտրանսպորտով կատարվող ուղևորաշրջանառությունը, եթե երկրում տարեկան փոխադրվում է 4360 ուղևոր, իսկ փոխադրման միջին հեռավորությունը 12 կմ է:

69

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Գետերը հորդանում են առավելապես աշնանը:
2. Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 800–1000 մմ է:
3. Վերընթաց գոտիականությունը թույլ է արտահայտված:
4. Կարսի սարահարթում օդի ջերմաստիճանը երբեմն կարող է իջնել -40°C -ից ցած:
5. Տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսահայաց լանջերին՝ 2000–3000 մմ:
6. Տարվա տաք կեսին տիրապետում են արևադարձային օդային զանգվածները:

70

ՀՀ տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Երկաթուղիների երկարությունը չորս անգամ գերազանցում է ավտոմոբիլային ճանապարհների երկարությանը:
2. Ռելիեֆային բարդ պայմանների պատճառով խողովակաշարային տրանսպորտը բացակայում է:
3. Ունի ներքին միասնական ավտոմոբիլային ճանապարհային ցանց:
4. Խճուղային ճանապարհային ցանցի խտությունը ցածրադիր, տնտեսապես զարգացած շրջաններում ավելի մեծ է, քան բարձրադիր լեռնային շրջաններում:
5. Գործող երկաթուղային գլխավոր մայրուղին (Այրում–Վանաձոր–Գյումրի–Մասիս–Երասխավան) ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ հանրապետության կենտրոնական մասով:
6. Ի տարբերություն ընդարձակ տարածություններ ունեցող երկրների, բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը տեղի է ունեցել հիմնականում ոչ թե հեռավորությունների, այլ բեռների ծավալների և ուղևորների թվի աճի շնորհիվ: